ՍՏՐԿԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՅԱՆ, ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ

Չկա առավել անհույս ստրկություն,
քան կապանքներից իրենց ազատ
կարծող մարդկանց ստրկությունը:
Վ. Գյոթե

Հոդվածում հիմնավորվում է այն դրույթը, որ մեզանում պետական մտածելակերպ հաստատելու կարևորագույն նախադրյալներից մեկը ազգային հոգեբանության մեջ ձևավորված ստրկամտության՝ որպես գոյատևման կենսափիլիսոփայության միջուկի հաղթահարումն է:

Ինքնաճանաչմանն առնչվող հարցերը ցայսօր մեզանում առավելապես դիտարկվել են հուզազգացմունքային և կրոնաբարոյական, այլ ոչ թե պատմափիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Հայ ժողովրդի հոգեկերտվածքը ձևավորվել է հազարամյակների հոլովույթով պայմանավորված պատմամշակութային ազդեցությունների ներքո: Թեև ազգային Ես-պատկերը պատմականորեն ձևավորված հարաբերականորեն կայուն կազմավորում է, սակայն սոցիոմշակութային տարբեր գործոնների ազդեցության հետևանքով, ինքնության որոշ գծեր պահպանելով հանդերձ, այն ենթարկվել է փոփոխությունների՝ ձեռք բերելով կամ կորցնելով սոցիալ-հոգեբանական հատկություններ, վարքագծի կարծրատիպեր ու դիրքորոշումներ: Այսպես, օրինակ, եթե մարդաբանական տիպը (արմենոիդ) պայմանավորել է հայի տեսակի գենետիկական կառուցվածք-կազմությունը և օժտել նրան մտավոր ու հոգևոր անուրանալի բարձր կարողություններով, ապա կենսագործունեության ոչ բարենպաստ սոցիալ-քաղաքական պայմանների և մշակութային փոխազդեցությունների հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել նաև բնավորության, խառնվածքի մի շարք բացասական գծեր, հատկանիշներ:

Ընդհանուր առմամբ հայ ազգային հոգեբանությանն ու մտածելակերպին բնորոշ է ծայրահեղությունների միտված խառնվածք՝ ստրկամտությունից մինչև ազատատենչություն, այլասիրությունից մինչև եսապաշտություն, ամբոխային վարքագծից մինչև անձնազոհություն: Ազգային մտախառնվածքին ներհատուկ հակասական գծերի ակնհայտ դրսևորումներից է, օրինակ, օրհասական, ճակատագրական պահերին

բռունցքվելը, անձնուրաց, միակամ-միաբանված կանգնելը վտանգի դեմ, բայց ահա խաղաղ ժամանակ համազգային-համապետական շահի գիտակցությունը իր տեղը սկսում է զիջել անձնական կամ խմբակային շահերին, և ***Ես-ը գերադասվում է Մենք-ից, գոյատևումը՝ արժանապատիվ ապրելուց:*** Վերջին հաշվով, այն ժողովուրդը, որը չունի ազգային պետության զարգացման ռազմավարություն, նրա համար ***գերնպատակ է դառնում գոյատևելը, այլ ոչ թե արժանապատիվ կյանքի համար պայքարելը:*** Իսկ գոյատևել նշանակում է պայքարել գոյություն ունենալու, իր տեսակը պահպանելու, այլ ոչ թե մարդավայել կյանքով ապրելու համար: Գոյատևման գիտակցության վրա հիմնված կենսափիլիսոփայությունը արդարացնում է տառապանքը, իսկ արժանապատիվ կյանքը առնչում հատուցման գաղափարին… Հայ ազգային գիտակցության մեջ գոյատևման կենսափիլիսոփայության ձևավորմանը մեծապես նպաստել է քրիստոնեական հարացույցը, որը, սկսած հինգերորդ դարից, գոյատևումը վերածել է ազգային կենսաձևի[1]: Գոյատևման մտայնությունը ազգային Ես-կոնցեպցիայի արժեհամակարգից հիմնովին դուրս է մղել քաղաքական-պետական մտածելակերպի տարրը: Գոյատևման կենսափիլիսոփայությունը, ըստ էության, ազգային արժանապատվությունը վիրավորող, հոգևոր ստրկամտություն և թերարժեքության զգացում սերմանող, ձևախեղված հոգեբանական դիրքորոշում է: Միանգամայն տեղին ենք համարում մեջբերել եվրոպացու հոգեկերտվածքի ձևավորման վրա քրիստոնեական գաղափարների ունեցած բացասական ազդեցության Ֆ. Նիցշեի բնութագրությունը, որը բնորոշ է նաև քրիստոնեական հարացույցով սնված ու դաստիարակված հայ մարդուն. «Եվրոպայի վրա տասնութ դարերի ընթացքում **մի** կամք է իշխել՝ մարդուց **նրբին մի վիժվածք սարքել: …**եվրոպացու ճակատագրի վրա իշխել են ոչ բավականին ազնվածին, …ոչ բավականաչափ բարձր ու պինդ, …ոչ բավականին ուժեղ ու հեռատես մարդիկ…, մինչև որ վերջապես փոքրացած, գրեթե ծիծաղելի մի տեսակ, ինչ-որ հոտային կենդանի, բարեհոգի, հիվանդոտ ու միջակ մի բան բուծվելով առաջ եկավ այսօրվա եվրոպացին»[2]: Դժվարանում ենք ասել, ծանոթ էր պատմավիպասան Ռաֆֆին քրիստոնեությանը տված նիցշեական այս բնութագրությանը, երբ արժևորելով քրիստոնեության պատմական դերը մեզանում՝ գրում էր, թե հայ կղերականները իրենց խոնարհության, համբերության, ճգնության, «աջ երեսիդ զարկեն ձախը դարձրու» քարոզներով «մեռցրել են ժողովրդի ոգին, և որոնք ունեցան այն վնասակար հետևանքը, որ խլեցին հայից նրա քաջությունը, որք սառեցրին նորա երակներում վեհության արյունը, և նա եղավ ստրուկ»[3]:

---

[1] Մանրամասն տե՛ս **Հայկ Հարոյան, Նելլի Հարոյան,** Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցը և գոյատևման կենսափիլիսոփայության ձևավորումը, «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2016/2 (45), էջ 15-21:

[2] **Ֆ. Նիցշե,** Բարուց և չարից անդին, Եր., 1992, էջ 58:

[3] **Ռաֆֆի,** Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1963, էջ 419:

Սոցիալական ճնշման ու կեղեքման պայմաններում ձիգ դարեր կենսագործող հայը կորցրել է ազատության համար մարտնչելու ոգին, գերադասել է գոյատևելու կենսափիլիսոփայությունը՝ հուսալով վերջնական արդար հատուցում: Ըստ էության, գոյատևումը՝ իբրև ազգային կենսափիլիսոփայություն, բնորոշ է պետականազուրկ, անպաշտպան, իրավազուրկ և հայրենազուրկ, անազատ վիճակում հայտնված, օտարների լծի տակ հեծող, զավթիչների թելադրած վարքագծի կանոններով ու սահմանած օրենքներով, ի վերջո՝ սոցիալական ճնշման ու կեղեքման պայմաններում կենսագործող հանրությանը: Նման կենսակերպ ունեցող ժողովրդի մեջ բացակայում է հավատը սեփական ուժերի հանդեպ, նրանում մեռած է պայքարի ոգին: Եվ եթե ազգային մտածելակերպը ազգային կյանքի հայելին է, ապա ստրկամտությունը՝ իբրև հոգեբանական դիրքորոշում, ազգային կեցության արտացոլում: Եվ այսպես, ստրկական հոգեբանություն ձևավորող, ստրկամտություն ծնող ու սնող, վերարտադրող ու պահպանող գործոնների շարքում վճռորոշ դեր են խաղում մարդկանց, ժողովուրդների սոցիալական անմխիթար, թշվառ վիճակը, բարոյահոգեբանական ճնշվածությունը, ապագայի հանդեպ անվստահությունն ու հավատի կորուստը, սեփական մտքերն ու համոզմունքները ազատորեն արտահայտելու ու պաշտպանելու վախը են: Այսպես, ուրեմն, իբրև հայ ազգային հոգեբանության մեջ տիրապետող գոյատևման կենսափիլիսոփայության բաղադրիչ՝ ստրկամտությունը որոշակի ազդեցություն է գործում հայ մարդու հասարակական ու անհատական վարքագծի, առհասարակ ազգային գիտակցության և հարաբերությունների վրա: Եվ լինելով գոյատևման մտայնության հոգեբանական հետևանք՝ ստրկամտությունն իր հերթին սնուցում և արդարացնում է այն: Ստրկամտությունը հոգեվոր տգիտության և հոգևոր անազատության վիճակ է. ինչպես տգետը, այնպես էլ ստրկամիտը, հասարակության մեջ ձեռք բերելով բարձր կարգավիճակ, ունենալով իշխանություն, բայց մնալով ստրկական հոգեբանության կրող, քողարկվում են ընդհանուր շահի ու բարոյականության դիմակով և դառնում չարիք: Ինչպես գոյատևման կենսափիլիսոփայությամբ առաջնորդվողի, այնպես էլ ստրկամիտի արժեհամակարգում առաջին տեղում է ցանկացած իրականություն որպես ճակատագիր, որպես դատապարտվածություն ընդունելը: Նա զուրկ է ազատ մտածելու և ազատ գործելու կարողությունից, թեև կարող է ունենալ ժամանակակից մարդուն բնորոշ ատրիբուտներ, օրինակ, լինել դիպլոմավորված, լավատեղյակ ժամանակակից գիտության ու արվեստի նվաճումներին, իրազեկված աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին, բայց այդ ամենի հետ մեկտեղ չունենալ սեփական տեսակետ: Ստրկամիտը չունի իր Ես-ը, դիմազուրկ է, համակերպվող և հաճկատար, զուրկ սեփական արժանապատվության զգացումից, ազատությանն անընտել է, գնահատում ու հասկանում է բռնակալականը: Նա իրեն հրամայողի, տիրոջ կարիքը

ունի և շարունակ նրան է փնտրում՝ հանց հանապազօրյա հացի, և վատից վատթարին է սպասում:

Ինչպես գոյատևման կենսափիլիսոփայությունը, այնպես էլ ստրկամտությունը ոչ միայն պետական մտածելակերպի, այլև ազգային միասնության ամենաառաջին թշնամին է, քանզի ժողովրդին ազգային արժեքների շուրջ համախմբելու փոխարեն մղում է անձնատուր լինելու օտարամոլության, հետևելու իր ինքնությանը անհարիր արժեհամակարգի, ձևավորում է այլոց կամքին անվերապահ հնազանդության վարքագիծ և ավելի շատ ապավինում է արտաքին, քան սեփական ուժերին: Ավելին, ստրկամիտը լռելյայն մերժում է ամեն մի իշխանություն, բայց և միաժամանակ հոգեբանորեն պատրաստ է անվերապահորեն ենթարկվելու և խոնարհվելու ցանկացած իշխանության: Արևելյան ժողովուրդների վերաբերմունքը իշխանությունների հանդեպ հոգևոր ստրկամտության դասական օրինակ է: Արևելյան մարդու հոգու, նրա բնավորության մեջ, գրում է Հեգելը, «ամուր, իրար մեջ միահյուսված են երկու, առաջին հայացքից միմյանց հակասող գծեր՝ բոլորի վրա իշխելու ձգտումը և ցանկացած ստրկության խոնարհաբար ենթարկվելը»[4]: Ընդհանուր առմամբ, ստրկամտությունը կարող է դրսևորվել թե՛ անհատական, թե՛ խմբային, թե՛ ազգային և թե՛ սոցիալական մակարդակներում: Սակայն ստրկության ամենավատթար ձևը ոչ թե սոցիալական, այլ հոգևոր ստրկությունն է: Հնարավոր է սոցիալական դրությամբ լինել ստրուկ, բայց հոգեպես լինել ազատ, և ընդհակառակը՝ սոցիալապես լինել ազատ, բայց հոգեպես մնալ ստրուկ: Ստրկակատիրական հասարակարգը շատ վաղուց պատմություն է դարձել, սակայն ստրկամտությունը՝ որպես հոգևոր բացասական որակ, հոգեբանական դիրքորոշում, շարունակում է գոյատևել՝ ձևափոխվելով ու ընդունելով առաջին հայացքից մարդկային արժանապատվությունը չվիրավորող, «անմեղ» տեսք ու կերպ: Բացահայտ և բիրտ սոցիալական ստրկությունն այսօր փոխարինվել է քողարկված, նրբացված հոգևոր ստրկությամբ: Գնալով աճում է դիպլոմավորված, կրթված ստրկամիտների քանակը, որոնք վերածվում են սոցիալական գիտափորձերի և հոգեբանական մանիպուլյացիաների առարկաների: Հատուկ մշակված ծրագրերի միջոցով նրանց վարքագիծը ուղղորդվում է ազգային արժեքներին խորթ ու անհարիր նպատակների իրագործման, և վերջին հաշվով այդ ծրագրերի հեղինակներն ու նրանց պատվիրատուները դառնում են մարդկանց, սոցիալական խմբերի, այսօր արդեն՝ ժողովուրդների կյանքի ու ճակատագրերի տնօրինողներ:

Ստրկական հոգեբանությամբ առաջնորդվող հանրությունը (անհատը) գոյատևումը համարում է բնական վիճակ և ինքն իրեն դատապարտում է անիմաստ գոյության, բավարարվում է այլոց կողմից իր հանդեպ դրսևորվող խղճահարությամբ: Ստրկամիտը չի հավատում

[4] **Гегель Г. В. Ф.** Работы разных лет. В двух томах. Т. 1. М., 1977, с. 214-215.

սեփական ուժերին, համբերատար ու անմռունչ հանդուրժում է վիրավորանքներն ու նվաստացումները, հարմարվում է ամենաանտանելի պայմաններին, անվերապահորեն ենթարկվում սոցիալական հիերարխիայում իրենից վեր կանգնածների, իշխանիկների ու իշխանությունների թելադրանքին ու կամայականություններին: Հոգեբանական նման դիրքորոշումով ապրող մարդը մտահոգված է հանապազօրյա հացով, անձնապաշտ է և անտարբեր ազգային, հանրային կյանքի հանդեպ: Ի դեպ, ստրկական հոգեբանությամբ կենսագործող հանրությանը բնորոշ թերարժեքության գիտակցությունն է, վերջին հաշվով, առաջ բերում ազգային սնափառությունն ու ազգային սնապարծությունը, որոնք, նախ, լինելով ինքնագնահատականի, ինքնաարժևորման և, այսպես կոչված, վայ հայրենասիրության դրսևորումներ, միաժամանակ նաև որպես այլոց կողմից գնահատվելու չիրականացված ակնկալիքի պատրանքային լրացումներն են:

Ստրկական հոգեբանական դիրքորոշման բացասական հետևանքներից մեկն էլ այն է, որ ***դրանով առաջնորդվող հանրությունը ծնում և վերարտադրում է միջակության իշխանություն, իսկ վերջինս հենվում է կեղծիքի, այլ ոչ թե ճշմարտության վրա:*** Միջակության իշխանությունը չի կարող իր քաղաքականությունը կառուցել ճշմարտության վրա, քանզի ճշմարտությունն ու արդարությունը խորթ են նրա էությանը: Այսօրվա մեր իրականությունը հենց այդ միջակության իշխանություն ձևավորած իրականությունն է, որին և ներհատուկ է ստրկամտության հոգեբանական դիրքորոշումը: Միջակության իշխանության տիրապետության ներքո գործառող հասարակությանը բնորոշ են պետական մտածելակերպի ցածր աստիճան, օրենքի հանդեպ մերժողական վերաբերմունք և այն շրջանցելու բացասական վարքագիծ: Արձանագրենք, որ այսօր մեր հասարակական, ազգային կյանքը կազմակերպվում է ոչ թե քաղաքակրթական նորմերին ու համապետական-համազգային շահերին համապատասխան, այլ տոհմացեղային մտածելակերպին ու կրոնական համայնքին բնորոշ արժեհամակարգով: Առհասարակ այնտեղ, որտեղ առկա է այս կամ այն աստիճանի կախվածության հարաբերություն, դրսևորում է գտնում նաև ստրկամտությունը: Ստրկամտությունը պայմանավորում և ուղղորդում է հոգու ու մտքի ազատություն չունեցող մարդկանց վարքագիծը և դրսևորվում է ստրկամիտ մտածելակերպի, ստրկամիտ վերաբերմունքի ու վարվելակերպի տեսքով: Ստրկամիտը հանուն իր գոյատևման ու բարեկեցության պատրաստ է զոհաբերելու պատիվ, արժանապատվություն, ազգ, հայրենիք: Ստրկամիտը հանդուրժում է ամեն տեսակ անարդարություն, երբեք չի հակադրվում, չի հակաճառում, վախենում է կորցնել սեփական բարեկեցությունը, զուրկ է ինքնուրույն մտածողությունից և գործելակերպից, սպասում է, որ ղեկավարեն իրեն, նախաձեռնող չէ, մի խոսքով՝ զուրկ է հոգևոր ազատությունից, չունի մտածողության ա-

զատություն, հետևապես ազատ չէ նաև իր գործողություններում: Ազատ լինել ստրկական հոգեբանությունից նշանակում է ունենալ մտածողության ազատություն, իսկ ազատ մտածող մարդը անհանդուրժող է անարդարության բոլոր դրսևորումների հանդեպ: Ցավով պետք է արձանագրենք, որ այսօր մեզանում ստեղծվել է պարադոքսալ մի իրավիճակ. կրթական քաղաքականությունը և սոցիալական քաղաքականությունը վերածվել են հակընդդեմ գործընթացների. կրթական գործը ամենևին էլ չի ծառայում պետության կողմից իբրև վերջնանպատակ հռչակված քաղաքացիական հասարակության կառուցմանը և այդ հասարակության լիարժեք անդամի՝ մարդ-քաղաքացու ձևավորմանը: Մեր կրթական համակարգը նպատակամղված է ոչ թե սովորողի համակողմանի զարգացմանը, սոցիալապես ակտիվ դիրքորոշման ու ստեղծագործական ազատ մտածողության խրախուսմանը, այլ նեղ մասնագետի, հրահանգներ ու պատվերներ կատարողի կայացմանը, որը նպաստում է սոցիալ-հոգեբանական բացասական դիրքորոշումների խրախուսմանը: Եվ այսպես, ստրկամտության հոգեբանական դրսևորումներից են՝ ***ինքնուրույնության իսպառ բացակայությունը, ինքնատիպության կորուստը,*** **այլ արժեհամակարգերը սեփականից գերադասելը, այն է՝ իր էությանը խորթ ու անհարիր նորմեր, վարվելաձև ու խոսելաձև որդեգրելը, որևէ գաղափարի գերի դառնալը, այս կամ այն ուսմունքի տառին և ոչ թե ոգուն հետևելը, մի խոսքով՝ ծայրահեղ հարմարվողականությունը (կոնֆորմիզմը):**

Դասականները պատմության իմաստը տեսնում էին մարդու հասարակական և հոգևոր ազատության հաստատման մեջ: «Ազատությունը, բարոյականությունը մարդու սուբստանցիոնալ սկիզբներն են, և այդ սկիզբների մասին գիտելիքը՝ որպես այդպիսին, նրա արժեքն է ու արժանապատվությունը»[5],- գրել է Հեգելը: Հոգեպես ազատ, հոգևոր ազատություն ունեցող մարդը իսկապես կրթված, զարգացած, ընդհանուր շահի գիտակցությամբ ապրող, պարտքի ու պատասխանատվության բարձր գիտակցություն ունեցող առաքինի մարդն է, զերծ ստրկական մտածելակերպից ու կեղծ հեղինակությունների առջև խոնարհվելուց: Հին հունական նշանավոր փիլիսոփա, սոցիալական դրությամբ ստրուկ Էպիկտետին է պատկանում այն միտքը, թե մարդու՝ որպես բանական էակի համար ամենակարևորը և ամենամեծ արժեքը հոգևոր ազատությունն է: Մարդու ազատությունը ոչ միայն հասարակական բարիքներից օգտվելու, այլև նախևառաջ նրա բանականության և կամքի ազատության մեջ է: Հոգևոր ազատությունն է, որ հնարավորություն է տալիս մարդուն զարգացնելու ստեղծագործական էական ուժերը, տարբերելու բարին և չարը, հասնելու անխոռով, լուսավոր և ուրախ կյանքի: Եվ նույնիսկ այսպիսի ձևակերպումները՝ «Եղեք փիլիսոփայության ստրուկը և դուք կհասնեք իսկական ազատության»

[5] **Гегель Г. В. Ф.** Философия религии. Т. 2. М., 1977, с. 151.

(Էպիկուր), կամ՝ «Մենք ազատ կլինենք, եթե դառնանք օրենքի ստրուկը» (Ցիցերոն), չնայած իրենց իմաստասիրական-մարդասիրական լիցքին, այդուհանդերձ բացասական երանգ են պարունակում: Չպետք է լինել ո՛չ բանականության, ո՛չ կրքերի, ո՛չ օրենքի, ո՛չ գաղափարի, ո՛չ փիլիսոփայության, առավել ևս կրոնական հավատի ստրուկը: Հոգևոր ստրկության բոլոր ձևերի բացառում, հոգու և մտքի լիարժեք ու լիակատար ազատություն. ահա ազատ հասարակության և ազատ ժողովրդի կենսագործունեության նշանաբանը:

Այսպիսով, ուղիղ համեմատական կապ գոյություն ունի ազգային պետական մտածելակերպի ձևավորման, պետականորեն գործելու և գոյատևման կենսափիլիսոփայությանը բնորոշ ստրկամիտ հոգեբանական դիրքորոշման հաղթահարման միջև: Հայտնի իրողություն է, որ մարդու կյանքն այնպիսին է, ինչպիսին նրա մտքերն են, և ընդհակառակը. քանի որ ստրկամտությունը ազգային միասնության և պետական մտածելակերպի ամենաառաջին թշնամին է, ուստի և ազգային հոգեբանության յուրահատկությունների ճանաչմանը միտված մտավոր պրպտումները ինքնանպատակ չեն: Նախ, դա անհրաժեշտ է ինքնության և պատմական հիշողության պահպանման, մանկուրտի չվերածվելու համար, երկրորդ, այն ժողովուրդը (անհատը), որը ինքնաճանաչման միջոցով գիտակցել է իր թերությունները, կիսով չափ արդեն ազատվել է դրանցից կամ նվազագույնը՝ հոգեբանական ու իմացական նախադրյալներ է ստեղծել դրանց հաղթահարման համար: Այս տեսանկյունից արդեն, ինչպես որ ինքնագիտակցության եկած ստրուկը պոտենցիալ Սպարտակն է, այնպես էլ ինքնաճանաչման միջոցով իր թերությունները գիտակցող ժողովուրդը (անհատը) սեփական ճակատագիրը ինքնուրույնաբար տնօրինելու ազատություն ձեռք բերած հանրությունն է: Այլ կերպ՝ Հայաստանի պատմության քաղաքական փորձի արժևորումը, ազգային ինքնագիտակցության զարգացումն ու ինքնաճանաչման խորացումը ազգային կեցության ինքնահաստատման, պետական մտածելակերպի զարգացման և պետականության կայացման անհրաժեշտ նախադրյալներ են: Ի վերջո, հոգեբանական բացասական դիրքորոշումների հաղթահարման և ազգային գիտակցության մեջ պետականության գաղափարի զարգացման համար հարկ է կայանալ իբրև պետականորեն կազմակերպված հանրություն ու գաղափարադաստիարակչական համակարգված գործունեության միջոցով ձևավորել սեփական մշակույթին համարժեք կենսակերպ ու որդեգրել մայր Հայրենիքում (ոչ արտերկրում) ինքնահաստատվելու, համազգային գերնպատակից ածանցվող՝ արժանապատիվ և մարդավայել կյանքով ապրելու մարտավարության կենսափիլիսոփայությունը:

Բանալի բառեր - *պետական մտածելակերպ, ստրկամտություն, մտախառնվածք, հոգեբանական դիրքորոշում, ինքնաճանաչում*

ГАЙК АРОЯН, НЕЛЛИ АРОЯН – ***Преодоление раболепия как необходимая предпосылка формирования государственного мышления.*** – В статье обосновывается, что для утверждения государственного мышления необходимо преодолеть в национальном сознании армян психологию раболепия, присущую философии выживания. Для этого требуется углубить национальное самопознание и, осознанав истинные национальные интересы, разработать общенациональные и общегосударственные стратегические ориентиры.

Ключевые слова: *государственное мышление, раболепие, духовный облик, психологическая установка, самопознание*

HAYK HAROYAN, NELLI HAROYAN – ***Overcoming Servile Psycological Approach as a Precondition for Formation of National Cognition.*** – The article states that the main precondition of patterning national cognition is the overcoming of mapped complex-servile approaches, particularly biologic-philosophical axes of existence.The solution of this problem demands national self-recognition and intensification, secondly, for recognizing moral-psychological traits of an Armenian, recognition of national – state rights and development of main principles of national strategies.

Key words: *national mentality, servility, psychological attitude, spiritual appearance, self-knowledge*